Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 549 - Ա
որոշման

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Որդան կարմիր միջատի պահպանության նպատակով ցանկապատի կառուցում, որը կնպաստի նրա հիմնական կերաբույսերի՝ որդանախոտի և հարավային եղեգի պահպանությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Կովկասի բնության հիմնադրամ (Ֆրիդրիխ-Էբերտ-Անլաժ 36, 60325, Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիա)
4.	Ծրագրի կատարողը	«Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, համայնք՝ Ձրվեժ, գյուղ՝ Ձրվեժ, ՀՎՀՀ՝ 0804807)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Որդան կարմիր» պետական արգելավայր, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արազափ և Ձրառատ բնակավայրեր, բնագավառը՝ շրջակա միջավայրի պահպանություն
6.	Ծրագրի բյուջեն	12,500,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Որդան կարմիր միջատի կերաբույսերի պահպանման համար ցանկապատի կառուցում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափ և Ձրառատ բնակավայրերում՝ 12,500,000 դրամ արժողությամբ: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2025

		թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ցանկապատի կառուցման հետ կապված ծառայությունների ձեռքբերում՝ 12,500,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Շրջակա միջավայրի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին և Շրջակա միջավայրի նախարարությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ